



## ԿՈՄԻՏԱՍՈՒՆ ՀԵՏ

Ա. — ՀԱՐԿ ԿԱՌ ԱՅՍ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ  
(Փոխան հառաջարանի)

Հայ ժողովուրդը տիտաններ շատ չունի, ու  
ալ բացառիկ հանճարներ կպճնեն իր պատ-  
մությունը Համեստ, հաճախ անանուն գոր-  
ծավորներ են, որ կուտ են հայ արվեստն ու  
գրականությունը. անոնց հասարակաց ճիգն  
է, որ հանճար մը ստեղծեր է, — հայ ժո-  
ղովուրդի հավաքական հանճարը, — որ դա-  
րերուն մեջեն պահեր կ գտեր պոռթկալու հա-  
մար, մերթ տաճարներ կոթողելով դարերուն  
դեմք, մերթ աշխարհը հեզնելով իր ճիգերուն  
մեջ: Հայ արվեստագետը մասնիկ մըն է եղեր  
լոկ հասարակաց այդ երկունքին մեջ, ծով-  
վեր, նույնացեր է անոր հետո: Աշխատասեր  
հայ ժողովուրդը մեծ է իր հավաքական հո-  
գիով առավելապես:

Ու դարերու ծոցեն հայտնվեր են երբեմն  
բացառիկ մարդիկ, որոնք եկեր են հայ հո-  
գին գտնել, ամեն անգամ որ հայ ժողովուրդը  
կորսնցուցեր է զայն: Որովհետեւ շրջաններ են  
եղած, երբ հայ ժողովուրդը խարիսափեր է  
խավարին ծոցը կույրի մը նման և մուրացիկի  
մը պես ձեռք է կարկառեր ամեն անցորդի,  
իր սեփական քեղեցկությունները մոռցած: Ու  
պետք եղեր են մարդիկ, որպեսզի գան, իր  
գանձերը ճանշցնեն իրեն և զայն մղեն նոր  
երկունքի, նոր ճիգի, նոր ստեղծագործու-  
թյան:

Կոմիտաս վարդապետ մեկն էր անոնցմե:

\*\*

Զարհուրելի բան է, երբ ժողովուրդ մը  
կկորսնցնե իր հոգին: Այլևս կույր մըն է, որ  
կխարիսափե մութին մեջ, կես մը դիակ, որուն  
ներսը ապրելու, դիմանալու, տեսելու հույսը  
ա'լ չկա:

Այդպես էր պատահեր և հայ ժողովուրդին:  
Ստրկության իր դարերուն մեջ կորսնցուցեր  
էր ան իր կերպարանքը, իր ոճը: Կխարիսա-  
փեր, դարերով, ուրիշ ժողովուրդներու հետ-  
քերուն վրա, ընկճված, շվարուն, զրկված  
սթափելու ուժեն:

Տասնիններորդ դարը, որ իբրև թե մեր  
վերածնության շրջանը բացավ, ի սկզբան ճիգ  
մըն էր միայն օտարին նմանելու, երբեմն և  
զայն կապկելու: Կարծելով, թե լույսը Արե-  
մուտքեն կուգա, գրեթե ամրող դար մը զայն  
փնտուելու գացինք հոն:

Մեր գրագետները օտար արվեստով սնան,  
ու օտար ամեն մեկ գրական շարժում միջուկ  
ստեղծեց իսկույն հայ կյանքի մեջ ալ: Երա-  
ժիշտներ ունեցանք, որոնք գոհարներ ստեղ-  
ծեցին, որոնց մեջ չէր թրթուր, ավա՛ղ, հայ  
հոգին: Ճարտարապետներ ունեցանք, որոնք  
հրաշակերտներ սփուցին, բայց անոնց մեջ  
հայ ոճ երբեք չկար: Ունեցանք և մեծ նկա-  
րիչներ, զորս օտարը իրավամք իւեց մեզմե:

Եվրոպայի հետքերուն վրայեն քաղցինք ալսպես, մեր հոգեկան ստեղծագործությանց բոլոր մարզերուն մեջ:

Դարուն կեսերեն հետո էր միայն, որ հայ ժողովուրդը իր դարավոր քունեն կարթննար, իր հսկ ընդերքը պեղել կսկսեր, իր հոգին կսկսեր փնտռել:

Հայտնված էր Սրբանձայանց, ու անոր շնորհիվ հայ ժողովուրդի հոգիւրն մայր երակը գտնված: Տերիաթներն ու առասպելները լեզու կառնեին, իմաստ կտանային առակ ու առած, հարություն կառներ Դավիթ Սասունցին դարերուն խորեն, ու անոր հետ հայ հոգին:

Կավե արձանները կիշրվեին ետևե-ետև հայ Պառնասին մեջ, Պոլսու և Թիֆլսի հայ վարժապետները իրենց ծոցը կրնեին իրենց երգարանները, ու փոխարեն՝ միջնադարյան մեր խեղճ երգիչները ու անոնց շարանին կցվող մեր հեք աշուլներն էին, որ կրարձրանային գահուրքը, ու անոնց տաղերուն մեջ հայ ժողովուրդը ինքինքը կսկսեր ձանչնալ, Քուշակն ու Սայաթ-Նովան կսկսեին մեր հոգվուրն խոսիլ:

Ճիզը կանդ շառավ: Քիշ հետո, Անին կպեղվեր, հայ միլատակները լեզու կառնեին, ու տաճարները կիսկսային իրենց գաղտնիքը: Հայտնված էր Թորամանյանը: Հայ ժողովուրդը կսկսեր իր հոգին փնտռել քարերուն ու փոշիներուն մեջ:

Ու մյուս կորմե, վանքերու նկուղներեն դուրս կհանվեին տակավ հայ ձեռագիրները: Մագաղաթները կսկսեին խոսիլ, ու անոնց էշերուն վրա թոշուններն ու ծաղիկները մեզ կգեղեղենին: Արևոտն ելած էին որդան կարմիրն ու որդան կապույտը, ու հայտնված՝ շնորհալի մանրանկարիչներ Սարգիս Պիծակն ու Թորոս Նոսիլինը: Հայ հոգին իր մեկ ուրիշ էջը բացած:

Աղատագրված էր հայ ոճը: Բայց ո՛չ Դեռ լման չէր հայ հոգին: Ու ահա կհայտնվեր մեծ մողը, որպեսզի լրացնե զայն:

Կոմիտաս'սն էր:



### Ի՞նչ ըրավ Կոմիտաս:

Ան նախ իր ականջը դրավ հայ գեղջուկի սրտի զարդին՝ անոր հուզումները կարդալու համար: Եվ այդ հուզումներուն մեջն ան քամեց ինչ որ դարերը մեզի կբերեին այնքան վճիռ ու անուշ: Հմբոնած, որ հայ ցեղը գտնելու համար պետք է հայ շինականին հոգին պեղել նախ, ան որոնեց զմայլի գեղեցկությունը, զոր հայ գեղջուկը կծածկեր իր համեստ, պարզ, մանկունակ երերուն մեջ, երգեր, ուր բնությունն ու ցեղը

. կընդելուզվեին, ուր դարերն ու սերում դները կգոկվեին մեկտեղ, «խորհրդավոր պաշտելի գաղտնիք», ինչպես կըս ինքը Կոմիտաս, գաղտնիք, զոր ինքն իսկ հանեց արևուն լույսին:

Ճէր բավեր հայ ժողովուրդի երգերուն մեջ բարախող այդ անուշ խոռվը գտնել: պետք էր միահմայիլ դարերուն խորը, անոնց ևս զաղտնիքը կորպելու համար, գիտնալու համար, թե ինչպես կերպեին երբեմնի հայերը: Թսան տարիի ան ինքպինք քամեց արդարե, որպեսզի գտնեն խաղերու բանալին, որպեսզի կարող մեր զմայլի շարականները իրենց վաղեմի պարզության ու քաղցրության մեջ: Ու հաղթանակի սեմին հասած էր արդեն, երբ խավարեցավ իր հոգին:

Ճէր բավեր նաև հայ հոգին գտնել: Պետք էր զայն մարդոց ալ պատմել, ու ակնածանքի կանչել աշխարհը գեղեցկություններուն առջև, զորս գտած էր հոն: Կոմիտաս կրցավ արդարեկ հետաքրքրել աշխարհը հեք ու փոքրիկ ժողովուրդի մը սրտին մեջ պահպած այդ գոհարաններով:

Բայց ան չկեղծեց գեղջուկին հոգին՝ պատմելու ատեն զայն մարդոց: Ան հայ երգը մեզ բերավ ինչպես գտներ էր շինականի շրթներուն, զինջ ու հարազատ: «Գրի առավ ու զաշնակեց», ինչպես կարձանագրեր ինք իր ներդաշնակած բոլոր երգերուն ճակտին:

Ան փորձեց միևնույն ատեն հայ երգը մաքրել իր որումներեն: Հայ հոգին խորթ դարձ ու դրացի խորթ ցեղեր խաթարեր էին հայ երգը, ու անոր հետ հայ հոգին: Անոնց իրենց դունչն էին երկարեր հայ ժամեն ներս ալ, ու սրբապղծեր մեր շարականներն ու մեղեղիները: Կոմիտաս զանք շինայեց հայ երգը գտնելու համար, զայն բերելու համար իր տոհմիկ պարզությանը:

Ան կրցավ այսպես ակուս բանալ: Հայ ժողովուրդը հպարտ է հիմա իր երգով, ու հպարտ կնայի մյուս ժողովուրդուն: Հայ ժողովուրդը գտավ իր հոգին իր երգերուն մեջ, ինչպես զայն գտներ էր, մաս առ մաս, քարի բեկորներուն մեջ, աշուլներու զմայլի տաղերուն մեջ, մագաղաթներու շբնալ զարդարանքներուն մեջ:

Կոմիտաս ցուցուց, թե ժողովուրդի հոգին է հիմքն ու խարիսխն ալպիստին, ու ով որ կկառչի անոր, ալիքներեն պիտի լքվի:



Հարկ կա՞ր սակայն այս աշխատության, Պետք կա՞ր գրելու մարդու մը մասին, որու շուրջ ամբողջ գրականություն մը կա արդեն: Քիչեր միայն այնքան պաշտամունքի առարկա եղած են մեր պատմության մեջ, որքան

եղավ Կոմիտաս, որովհետև քիչեր միայն կրցած են անոր շափ երախտիք ձգել: Հայ ժողովուրդի սերը ու գուրգուրանքը դեպի Կոմիտասը հետևանքը չէ եղերական այն վախճանին, որ անորը եղավ: Զարհուրենի մահեր շատերը ունեցան մեր մտավորականներնեն, բայց ոչ մեկը այնքան խորունկ տեղ գտավ հայ հոգիին մեջ որքան Կոմիտաս, որովհետև ոչ մեկը անոր շափ կրցեր էր խորանալ հայ հոգիին մեջ:

Եվ բնական էր, հետևաբար, որ անոր կյանքը և գործը ևս այդքան ուշադրության առարկա դառնային:

Արդարեն, տասնյակ տարիներե ի վեր կիսովի Կոմիտասի մասին անընդհատ: Բաղմից զրեցին իր կարձ բայց բեղուն կյանքին վրա, անոր մասին անթիվ հուշեր տպեցին, պոեմներու և քերթվածներու նյութ ըրին զայն, վերլուծեցին անոր վաստակը իր այլազան երեսներուն մեջ: Բայց ինձի այնպես կթվի, թե դեռ ամեն բան ըսկած չէ և իր կյանքը պատմված չէ լրիվ: Նախ չկա երկ մը, որ իր կյանքին ու գործունեության ամրողական մենագրությունն ըլլար և ուր ան ներկայանար իր բովանդակ առաքելությանն ու ճիգերուն մեջ: Հետո, իր մասին գրվածներուն մեջ ալ կան լուսաբանության կարուտ այնպիսի կետեր, որոնք պետք է պարզվին, բանի չէ շաբագրված վերջնական այդ մենագրությունը:

Ով որ Կոմիտասը ճանչցած է, ցավով կտեսնե, որ ան չերկիր մեզ լրիվ իրեն նվիրված հուշագրության մեջ: Թերթերու հավաքածուները, իրենց կարգին, ամեն բան չեն պատմեր մեզ ճշգրիտ: Անդին իր՝ Կոմիտասի նամակները բացառիկ պահերը միայն կուտան իր կարձ բայց ալեկոծ կյանքին, մինչ իր ինքնակենսագրական նոթերուն մեջ ան շատ է ժաման, որպեսզի տեղյակ դառնայինք բովանդակ իր ապրումներուն, ու անոնք իսկ զրի առնված են պահու մը, երբ ան նոր կոկսեր իր հիմնական առաքելությունը: Ու դեռ ավելին կա: Վրեպներ շատ կան իր մասին գրվածներուն մեջ: Ոմանք այնքան խանդավառված են, օրինակ, իրենց հուշերը գրելու ատեն, որ հաճախ դեպքերն ու դեմքերը կիսունեն իրարու, կշփոթեն թվականներ ու վայրեր, կկարծեն մաս առած ըլլալ Կոմիտասի հետ կապված այս կամ այն դեպքին: Մեկը զայն շատ մոտեն ճանչցած ըլլալ հավակնողներեն, կդրե, օրինակ, թե 1915-ի վերջերը, Պոլսեն մեկնել առաջ, այցելության է գացած Կոմիտասին Շիշլիի բուժարանին մեջ, ուր ան կիսնամվեր, ու կնկարագրե ալ այդ այցելությունը, մոռնալով, որ... 1916-ի վերջերն էր միայն, որ Կոմիտաս պիտի զեղվեր հուն:

Ուրիշ մը իր հուշերուն մեջ կենթադրե նույնպես ներկա եղած ըլլալ, 1915-ին, Կոմիտասի աքսորեն դառնալեն հետո, անոր կատարած Դոնբացերի արարողության Գուրուշշշմի հայ եկեղեցվո մեջ: Այդ տարվան Դոնբացերին Կոմիտաս դեռ աքսորի իսկ չեր գացած: Իսկ ակնարկված Դոնբացերը 1916-ի Սաղկազարդի կիրակին է, որ պիտի կատարեր ան, երբ... հուշերն ատորագրողը վաղուց էր մեկնած Պոլսեն:

Ուրիշի մը հուշերուն մեջ կարդացած ենք դարմանքով, թե Կոմիտասի Փարիզան ելույթներուն առթիվ անոր շնորհվեցավ... նորելի մրցանակը:

Այսուր կարդացած ենք, նույնպես զարմանքով, թե Կոմիտասը իր աքսորի օրերուն գուրգությանքով շրջապատողներու մեջ եղած չ Սիամանթոն ալ Այդ տողերը գրողը չէր անդրադարձեր, որ Զանգերըն էր Կոմիտասի աքսորավայրը, մինչ Սիամանթոն Ալաշ աքսորված էր:

Անդին, մեծատաղանդ մեր մեկ բարեկամը Կոմիտասը տեսած ըլլալ կերեակայի ՊետիՇանի մեկ կաֆեն, բոված... Երվանդ Թոլայանը նստած, ու կհորինե վիպական դրվագներ, որպեսզի Կոմիտասը պատցնե փաշաներու հարեմը, ու թուրք կիները անոր սփոփել տա հոն:

Եթե հիշեցինք այս քանի մը փաստերը, ցուց տալու համար էր միայն, որ մարդոց հիշողությունը երբեմն կեղզի համբեն, ու քեզ ալ կմոլորեցնե հետք:

Ու դեռ խոսքը ըլլինք անոնց, որոնք Կոմիտասի մասին հուշեր գրեցին, առանց նույնիսկ զանիկա ճանչցած ըլլալու, կամ երբ հազիվ թե զայն հետվեն տեսած էին...:

Եթե մենք, որ այդ օրերն ապրեցանք, կշփոթինք նման հուշեր կարդալով, ինչքա՞ն դժբախտ պիտի ըլլան մարդիկ մեղմե սերունդ մը հետք...:



Անցնող սերունդը քիչ բան թողուց մեզ իր հուզումներուն, իր խոհերուն, իր մտերիմ պահերուն մասին: Անընք մտահոգությունը կարծես երբեք չընեցան իրենց ներքին խոռվին ու մտածուները փոխանցելու իրենցմե ետքիններուն: Ոմանք ալ տիրաբար ինկան իրենց ուժերուն լրության և իրենց ճիգերուն թափին մեջ, կես ձգած իրենց գործը: Իրենց մտքեն չէր անցներ անշուշտ ներկայանալ վաղվան, այդպես կիսատ ու թերի: Ու անոնք առին, իրենց հետ գերեզման տարին շատ բան իրենց տեսածեն, իրենց դիտածեն, շատ բան նաև իրենց ապրած կյանքեն ու գործունեութենեն:

Ուրիշներ բախտն ունեցան մեծ սպանդեն ձողովրելու: Եվ սակայն անոնք ևս թերացան իրենց գիտցածը բախլու շրջանի մը մասին, որ այնքան ուշագրավ եղավ իր հույսերով և հուսախարություններով, իր ցնծովթյան պահերով և աղետներով, ինչպես և գեմքերուն մասին, որոնք իրենց աշքերուն տակ գեր էին կատարեր բացառիկ այդ անցքերուն մեջ: Եվ, ավագ՝ զետքեատի կնոսորանան սակավաթիվ այդ վերապրողներն ալ, ու շատ բան մութը պահի ման վաղվան պատմության համար, որ բերների բերան իրեն հասած լուրերուն և թերթերի մուրացված քանի մը դժգույն տողերու պիտի կառչի, անցյալը ճանչնալ փորձելու համար:

Վերապրողներուն մեջ անշուշտ շատերը կային, որ ճանչեր էին Կոմիտասը, բայց անոնք իրենց բոլոր գիտցածը սպառեցին թուոցիկ հուշերու մեջ, առանց կարենալու լրիվ տալ շրջանը, ուր Կոմիտաս անցուցեր էր իր գործոնեռության վերջին շորս-հինգ տարիները: Ու այդ շորս-հինգ տարիին մեկն էր այն բացառիկ պահերեն, ուր հայկական Պոլիսը իր ամենեն ոգեսոր օրերն ապրեցավ, դահիճին հանձնելե առաջ իր մտքին ու արվեստին ծաղիկը, և ուր Կոմիտաս, ինք ևս, դիմելե առաջ իր եղերական վախճանին, մտած ըլլալ կարծեր էր իր առաքելության ամենեն բեղմնավոր հանգրվանը:

Հիմա այլևս անոնցմե ալ շատ քիշերը միայն կամ եթե անոնք ալ իրենց գիտցածը թուղթին շանձնեն, մեր մոտավոր երեկը շատ բան պիտի առնե տանի հետը, ու Կոմիտասը վաղվան մարդոց պիտի երեւա առասպելներու մեջ: Ճիշտ է, ահավոր գրվագներով լեցուն եղավ անոր կրանքը ու վաղը անոր կենսագրությունը պիտի կարդան եղերավեպի մը պես, նույնիսկ եթե ան պատմվի ամենեն ժլատ գույներով, բայց անհրաժեշտ է իրական գիծեր տալ իր վաղվան կենսագրին, որպեսզի առասպել չկարծեն այն մեծ եղերերությունը, զոր Կոմիտաս ապրեցավ:

Դժբախտ բախտավորներեն մեկը, որ այդ օրերը տեսավ և դեռ բան մը կպահէ իր հիշողության մեջ այս տողերը գրողն է: Ան ևս ապրեցավ Կոմիտասի ապրած ժամանակին հետ, հուզումներով և երազներով բարախուն այն ութը տարին, զոր մեծ վարպետը շնչեց Պոլսո մեջ, վերջին քանի մը տարին բուժարանի մը անկումը:

Ան կգիտակի, որ առանց լրիվ ճանշցնելու շրջապատը, որուն մեջ գործեցին մեր երեկվան դեմքերը և խմորվեցան և ճիգի անցան անոնք, միշտ բան մը մութ պիտի մնա անոնց կյանքեն, որքան ալ առատ ու բազմազան մանրամասնություններ տանք և դրվագը կցենք դրվագին:

\*\*

Ընթերցողը թող շգայթակղի: Խորագիրը, զոր այս հոգվածաշարքը կկրն, իր կարծած իմաստը շունի: Ան շենթադրեր որևէ հավակնություն այս տողերը գրողին կողմէ պատմության հանձնելու անձնական իր հարաբերությունները Կոմիտասին հետ: Ճիշտ է, ան ալ ունեցած է իր կապերն ու հանդիպումները ողբացյալ արվեստագիտին հետ, և պիտի հիշեա զանոնք ամեն մեկը իր տեղին Բայց այս աշխատությունը գրված չէ դիպվածական այդ հանդիպումները պատմելու համար:

Այս տողերը գրողին համար փոքր սփոփանք չէ անշուշտ առիթ եղած ըլլալ Կոմիտասի զանազան երաժշտական ելույթներուն և դասախոսությանց, մանավանդ անոր հրապարակային ինչ-ինչ արտահայտությանց և հոգվածներուն: Այդ առիթները ան կպարտ սակայն դիպվածածին:

Արդարն, «Ակատամարտ»-ի խմբագրության մեջ իր աշխատած տարիներուն, այս տողերը գրողին հանձնված էր ի միջի այլոց հանդիպությանց նկարագրությունը, ինչպես և թատերական և գեղարվեստական քրոնիկներու հոգոր: Այս պարագան իրեն համար առիթ մը եղավ մոտեն հետեւելու Պոլսո գեղարվեստական կյանքին երկար տարիներ, ու շփում ունենալու բոլոր այն կարկառուն դեմքերուն հետ, որոնք փայլեցան իբրև բեմի և երաժշտության մարդու: Կոմիտասի հետ իր հանդիպումները մասսմբ ադոր արդյունքն են:

Կոմիտասի հետ շփման առիթներ եղան, այս տողերը գրողի համար, նաև զանազան հանդիպությունները, որոնց կազմակերպման մեջ բաժին ունեցավ, ինչպես և ժամանակա-ը-ը, զոր հրատարակեց Վարդումանի հետ մեկտեղ և որուն աշխատակցեցավ նաև Կոմիտաս:

Օրհնենք դիպվածը, որ մեզ ժամանակակից ըրավ բացառիկ ինչ-ինչ դեմքերու և մեզ պարգևեց շնչել միմնույն օդը, որ անոնց հուզումներուն ու տեսիլքներուն կայծով մեզ ալ բռնկցուց մերթ ու երբեմն ալ առիթներ տվակ շփում ունենալու անոնց հետ: Բայց գոհանանք այդքան մը փառքով ու շհալակնենք անոնց ճիգերուն մասնակցած ըլլալ, գեր կատարած ըլլալ անոնց առաքելության մեջ, եթե նույնիսկ շատ համեստ եղան անոնք՝ մեր գործակցությունը շարհամարհելու իրենց այս կամ այն աշխատանքին պահուն:

Այս աշխատությունը առավելապես սերունդի մը հանդիպումն է որ պիտի պատմե Կոմիտասին հետ: Որովհետեւ, արդարն, ամբողջ սերունդ մըն է, որ շփման մեջ մտավ հետը, անով ովագորվեցավ, անոր շունչին տակ

լծվեցավ ճիզի: Շատեր, անշուշտ, անձնական, նույնիսկ մտերիմ պահեք ունեցան հետը, կամ գործակցեցան անոր: Բայց ան սեփականությունը մնաց բովանդակ սերունդի մը, ինչպես որ պիտի մնա հաջորդ, և բոլոր սերունդներուն ալ:

\*\*

Վաղուց էի ծրագրած գրել Կոմիտասի մասին: Կուզեի տալ, ծավալուն հատորի մը մեջ, անոր բովանդակ կյանքը, և հետևաբար, տարիներու ընթացքին, հավաքած էի նյութերու և նոթերու հսկա պաշար մը, որոնք ատաղձ պիտի ծառայեին աշխատությանս: Գրի առած էի նույնիսկ կարեռ մաս մը անկե:

«Էջմիածին» ամսագրի մեջ հոդվածներու այս շարքը ծրագրիս մեկ մասն է միայն: Զանց ըրած եմ, ինչպես պիտի տեսնե ընթերցողը, առաջին շրջանը իր կյանքին, սկսելու համար այն պահեն, երբ պիտի սկսեր Պոլսու իր գործունեությունը: Ու հետո, պարբերականի մը էջերը շմանդելու մտահոգությամբ, հապաված եմ շատ բան նյութերեն, որոնք տեղ պիտի կրնային գտնել ծրագրված աշխատության մեջ, եթե ան հատորով լույս տեսներ:

Հրատարակելով հոդվածներու այս շարքը, հապաղած պարտք մըն է, որ կհատուցան նենք: Ճիշտ կես դար կրաժնեն մեղ այն օրեն, երբ ան մեր մեջ էր դեռ, մեր հետը, իր ուժերուն լրումին և իր կորովին բովանդակ թափին մեջ, ծրագիրներ որոճալով խանդավառ և մեզ ալ հետը խանդավառելով: Մարդ չի կրնար շապիր, կես դար հետո ալ, Կոմիտասի ստեղծած պահը Պոլսու մեջ, և չսարսուալ, վերհիշելով այն բոլորը, որ կես թողուց մեծ առաքելություն մը, իր ամենեն ոգեսր վայրկյանին: Հանցանք պիտի ըլլար թուղթին շհանձնել ինչ որ դեռ կհամենա մեր հիշողության մեջ, ու զայն խառնած ուրիշներուն ալ հուշերուն, պատկերը շտալ շրջանի մը, և այն բացառիկ գերին, զոր կոմիտաս ունեցավ մեր այդ օրերու կյանքին մեջ:

Պիտի տանք, հաջորդական հոդվածներու մեջ, տարիները, զորս ան մեր մեջը անցուց,

սկսյալ այն պահեն, երբ ոտք դրավ սուլթան-ներու մայրաքաղաքը, հայ կյանքին կրթերով բռնկած մեկ վայրկյանին, պատմելով իր սփոած խանդավառությունը առաջին օրեն և իր հանդիպած խութերը, կրակը, զոր բանկցուց երիտասարդության մեջ և ոգեսրությունը, զոր արծարծեց ամենուրեք իր շուրջը, իր տքնության և հաղթանակի պահերը հավասարապես, հմարը, զոր պտտցուց քաղաքի քաղաքին պատպահ և ակնածանքը, զոր հարկադրեց Եղբարպային հայ երգին փառքին առջև, հասնելով այսպես ահավոր այն օրերուն, երբ պիտի խավարեր խսպառ իր գիտակցությունը:

Սույն հոդվածաշարի հիմնական մասը հետեաբար այն գլուխներն են, որոնք կվերաբերին Կոմիտասի Պոլսու տարիներուն, երբ հեղինակը մոտեն տեղյակ է անոր գործունեության: Բայց այս տողերը գրողը մտադրած ըլլալով լրիվ ներկայացնել այդ Կոմիտասը, ստիպված է նախ պատմել, զոնե հարեւանցի, թե ի՞նչ փուլերե անցավ հայ երգը Պոլսու մեջ մինչև Կոմիտասի գալը, այսինքն ատալ այն միջավայրը, ուր պիտի գոր ան գործել իր կյանքի վերջին շրջանին:

Այս աշխատանքը, ուրեմն, Կոմիտասի լրիվ կենսագրությունը չէ, ոչ ալ ամբողջական վերլուծումը իր գործունեության: Բայց ան փորձ մըն է ներկայացնելու դերը, զոր կատարեց ան հայ կյանքի մեջ: Կոմիտասը ըմբռնած պիտի ըլլարյանք, եթե զննեինք զայն հայ երաժշտության հետ իր առնշությանը մեջ միայն, արանց շոշափելու և այն բացառիկ գերը, զոր առհասարակ ունեցավ հայ մշակութի վերընձյուլման համար: Ան մեծ եղավ իրեն երաժշտական գործունեության մեջ՝ խանդավառությանը համար, զոր ստեղծեց իր շուրջը, ճամբռն համար, զոր բացավ: Ընթերցողը թող զգարմանա ուրեմն, եթե քայլ առ քայլ պիտի հետեւինք Կոմիտասին, ինչպես իր բուն կոչման, նույնքան իր սփոած ոգեսրության, Գողգոթա պիտի բարձրանանք հետը միասին ու պիտի հետը ման գանք տանջանքի բոլոր հանգըրվանները, մինչև որ փակենք աշքերը, և զայն տանինք պանթեռն՝ հայ հողին գիրկը:

(Նարունակելի)